



**ՀԱՍՏԻԿ ԽԱՎԱՏՐՅԱՆ  
ԱՀ վերաբենիչ դատարանի դատավոր,  
Դատավորմերի միության նախագահ**

## **ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՏԱԽԱՎԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Դատավորի անկախության, անաշառության, անկաշառության երաշխիքները, որպես արդարացի արդարադատության հիմք, միշտ էլ գտնվել են ինչպես միջազգային այնպես էլ հայրենական իրավագետների ուշադրության կենտրոնում, որում իր որոշիչ դերն ունի դատավորի կարգավիճակի՝ այդ բնում դատավորի պատասխանատվության համալիր վերլուծությունը:

Դատավորի պատասխանատվության ինստիտուտը դատավորի իրավական կարգավիճակի բաղադրատարերից է և դրա առանձնացումը պայմանավորված է դատավորի իրավական պաշտպանվածության անհրաժեշտությամբ, ինչպես նաև դատավորի պատասխանատվության ինստիտուտի կարևորությամբ:

Արցախի Հանրապետությունում, /Արցախի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն/ Արցախի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն անվանումները նույնական են/ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը մինչև նոր՝ 2017թ. հուլիսի 21-ի դատական օրենսգրքի ընդունումը, կարգավորվում էին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մի շարք օրենքներով:

Սահմանադրավես, «Դատավորի կարգավիճակի մասին» ԼՂՀ օրենքով, որի 31-րդ հոդվածը սահմանելով, որ դատավորին կարգապահական պատասխանատվության է ենթարկում դատական մագիստրատուրայի խորհուրդը, դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունքը օժտում էր արդարադատության պետական

վարչության պետին: Նշված օրենքը, որպես դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքեր, մատնանշում էր. 1.արդարադատություն իրականացնելիս օրենքի խախտում բույլ տալը, 2.աշխատանքային կարգապահությունը խախտելը, 3.դատավորին անվայել արարք կատարելը, ինչպես նաև նույն օրենքի 14-15-րդ հոդվածների պահանջների խախտումը:

Նշված հոդվածները սահմանում էին, որ դատավորն իր դատավորական գործառույթը ներ իրականացնելիս պարտավոր է խստագույնս պահպանել օրենքները, հող տանել իր մասնագիտական գիտելիքների մակարդակի և աշխատանքի որակի բարձրացման ուղղությամբ, խուսափել այն ամենից, ինչը կարող է վնասել դատարանի հեղինակությանը և դատավորի բարձր կոչմանը, կասկած հարուցել դատավորի անաշառության և անկողմնակալության նկատմամբ:

Դատավորը պարտավոր էր խստագույնս պահպանել երիկայի և բարոյականության նորմերը:

«Սագիստրատուրայի խորհրդի մասին» ԼՂՀ օրենքի /որը գործել է 1999թ. մինչև 2009թ. մարտի 01-ը/ 14-րդ հոդվածը Սագիստրատուրայի խորհրդին վերապահելով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորություն, և որպես պատասխանատվության հիմք նախատեսելով դատավորի կողմից օրինականության խախտում բույլ տալը, անփութության հետևանքով դատական աշխատանքում բերություններ ունենալը, աշխատանքային կարգապահությունը խախտելը և դատավորին անվայել արարք բույլ տալը, սահմանում



## LՂՀ դատական իշխանություն

Եր նաև պատասխանատվության տեսակներ՝ հայտարարել դիտողություն, նկատողություն, խիստ նկատողություն:

Խորհրդին վերապահված էր կարգապահական վարույթը կարճելու և հարցի քննարկմամբ բավարարվելու լիազորություն:

Օրենքը միաժամանակ դատավորին խորհրդի նիստին մասնակցելու և իր կարծիքը հայտնելու իրավունք էր վերապահում:

Վկայակոչված օրենքների հիման վրա 2002թ. հուլիսի 10-ին LՂՀ-ում դատական մագիստրատուրայի խորհրդի կողմից հաստատվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատավորի վարքագծի կանոնագիրը, որում ամրագրված 12 կանոնների խախումը կարող էր հանգեցնել դատավորի կարգապահական պատասխանատվության:

Նշված օրենքները, ինչպես նաև Կանոնագիրը մի կողմից սահմանում էին երաշխիքներ, որոնք ուղղված էին դատավորի անկախության և անկողմնակալության ապահովմանը, մյուս կողմից դրանց խախումը հանգեցնում էր կարգապահական պատասխանատվության: Բուկ «Դատավորի կարգավիճակի մասին» LՂՀ օրենքի 31-րդ հոդվածն ամրագրելով, որ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավունք ունի նաև արդարադատության պետական վարչության պետք, դատավորին կախման մեջ էր դնում գործադրի մարմինց:

Միաժամանակ այս դրույթը թիւմ էր նաև Եվրոպական խարտիայի 5.3. կետի կարգավորումից, որը նախատեսում է, որ ցանկացած անձ պետք է հնարավորություն ունենաւ առանց հատուկ ծնականությունների անկախ մարմնի քննությանը ներկայացնել տվյալ կոնկրետ գործով արդարադատության գործունեության մեջ խախումների վերաբերյալ իր դգոհությունները: Այդ մարմնը, եթե զգուշավոր և ուշադիր քննությունն անվիճելիորեն վեր է հանում դատավորի աշխատանքում եղած թերությունները, իրավունք ունի դիմելու կարգապահական ատյանին, կամ առնվազն խորհուրդ տալու այդպիսի դիմում ներկայացնել այն մարմնին, որը, կարգավիճակին համաձայն, լիազորված է այդ անելու:»

2006թ. ընդունված Արցախի առաջին

Սահմանադրության 6-րդ գլուխը՝ 9 հոդվածներով, հշշակելով դատավորի անկախության երաշխիքներն, իր 116-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորմամբ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավունքը վերապահում էր դատավորների անկախությունն ապահովող նորաստեղծ մարմնին՝ Արդարադատության խորհրդին: Իսկ 2008թ. ընդունված դատական օրենսգիրը մանրամասնեցնում էր դատավորների կարգապահական պատասխանատվության հիմքերը, տեսակները, հետևանքները: Այսինքն, բոլոր դեպքերում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը՝ դատավորի նկատմամբ կարգապահական սույժի կիրառումը, վերապահում էր Արդարադատության խորհրդին, որն էլ իր կազմում ունենալով դատավորների մնջանասնություն, հնարավորություն ուներ մերժելու անհիմն միջնորդությունները:

Վկայակոչվածներն արտացոլում են իրավական նակարդակում դատավորի պատասխանատվության ինստիտուտի իրավական կարգավորման էվոլյուցիան:

Այսօր էլ դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերը սահմանված են Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ և դատական օրենսգրքով, որոնց հիմքում դրված են հարցի հետ առնչվող միջազգային փաստաթորթերով ամրագրված սկզբունքները:

Նոր՝ 2017թ. փետրվարի 20-ին ընդունված Սահմանադրությունը, դատական իշխանությանը վերաբերող 6-րդ գլուխը ի համեմատություն նախորդ՝ 2006թ. Սահմանադրության, նշանակալի փոփոխությունների է ենթարկվել, նպատակ ունենալով ամրապնդել դատավորի անկախության երաշխիքները և բարձրացնել դատական իշխանության ինքնականավարման արդյունավետությունը:

Պետք է ընդգծել, որ հարցին առնչվող ԱՀ սահմանադրական կարգավորումները թիւմ են «Դատավորի արողքեսիոնալ վարքագծի, մասնավորապես՝ էքիվայի նորմերի դատավորի կարգավիճակի հետ անհամատեղելի վարքագծի և անաշառության սկզբունքների մասին» Եվրոպական դատավորների խորհր-



դատվական խորհրդի 2002թվականի նոյեմբերի 19-ի եզրակացությունից /այսուհետ, նաև՝ Եզրակացություն/, 2002 թվականի նոյեմբերին Հազարայում ընդունված Բանագլորյան սկզբունքներից և խնդրու առարկայի վերաբերյալ միջազգային այլ հանձնարարականներից ու մոտեցումներից:

Այսպես, Սահմանադրության 137-րդ հոդվածը, հոչակելով դատավորի անկախության և միայն օրենքին ենթարկելու սկզբունքը, ամրագում է. «2.Դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար՝ բացառությամբ այն դեպքի, եթե առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ: 3.Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քիչական հետապնդում կարող է հարուցվել միայն Բարձրագույն դատական խորհրդի համաձայնությամբ: Դատավորն իր լիազորությունների իրականացման կապակցությամբ առանց Բարձրագույն դատական խորհրդի համաձայնության չի կարող գրկել ազատությունից՝ բացառությամբ այն դեպքի, եթե նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այդ դեպքում ազատությունից գրկելը չի կարող տևել 72 ժամից ավելի: Դատավորին ազատությունից գրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Բարձրագույն դատական խորհրդի նախագահը: 4.Դատավորը չի կարող գրադեմել իր կարգավիճակի չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն առևտրային կազմակերպությունում, գրադեմ ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք՝ բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Դատական օրենսգրքով կարող են սահմանվել անհամատեղինության լրացուցիչ պահանջներ: 5.Դատավորը չի կարող գրադեմ քաղաքական գործունեությամբ: 6....7.Դատավորի լիազորությունները Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ դադարեցվում են անհամատեղինության պահանջները խախտելու, քաղաքական գործու-

նեությամբ գրադեմու, առողջական վիճակի պատճառով պաշտոնավարման անհնարինության, էական կարգապահական խախտում կատարելու դեպքում: ...9.Դատավորի կարգավիճակին վերաբերող մանրամասները սահմանվում են դատական օրենսգրքով:»

Այս սահմանադրական նորմից հետևում է, որ Սահմանադրությունը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը վերապահել է միայն մեկ մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդին, որը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննարկման ժամանակ հանդես է գալիս որպես դատարան: Սահմանադրությունը 144-րդ հոդվածով հոչակում է, որ ԲԴԽ-ն անկան պետական մարմին է, որը երաշխավորում է դատավորների և դատարանների անկախությունը:

Հարկ է նշել, որ ի տարրերություն ՀՀ Սահմանադրության 174-րդ հոդվածի կարգավորման, որի համաձայն Բարձրագույն դատական խորհրդուրը կազմված է տասն անդամներից՝ որոնցից հինգ դատավոր անդամներ են, որոնք ընտրվում են դատավորների ընդհանուր ժողովի կողմից, իսկ հինգը ընտրվում են ՀՀ Ազգային ժողովի կողմից մասնագիտական 15 տարվա փորձառություն ունեցող իրավաբան գիտնականներից, կամ հեղինակավոր իրավաբանների թվից և ԲԴԽ նախագահին ընտրվում է խորհրդի կազմից, ապա Արցախի Հանրապետության վերը վկայակոչված սահմանադրական կարգավորումից ակնհայտ է, որ ԱՀ ԲԴ խորհրդի կազմում մեծամասնություն կազմում են դատավոր անդամները՝ 5 անդամից երեքն ընտրվում են դատավորների ընդհանուր ժողովի կողմից, իսկ երկուսը նշանակվում են Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի կողմից: ԲԴԽ նախագահն ընտրվում է խորհրդի դատավոր անդամներից: Մեր կարծիքով ԱՀ Սահմանադրության կարգավորումն այս հարցի վերաբերյալ ավելի է համապատասխանում միջազգային կազմակերպությունների կողմից այս հարցի վերաբերյալ առկա դիրքորոշմանը: Օրինակ, Դատավորների միջազգային միության կենտրոնական խորհրդի կողմից 1999թ. նոյեմբերի 17-ին Թայվա-



## ԼՂՀ դատական իշխանություն

նույն ըստունված և 2017թ. Նոյեմբերի 4-ին Սահմանադրության վերանայված «Դատավորի համբողիանուր խարտիա» /այսուհետ, նաև՝ Խարտիա/ 7.1.հոդվածի 2-րդ պարբերությունում ամրագրված է. «Կարգապահական վարույթը պետք է իրականացվի անկախ մարմնի կողմից, որը ներառում է դատավորների մեծամասնությունը կամ նրան համարժեք այլ մարմնի կողմից»:

Խարտիան ամրագրելով, որ իրավունքի գերակայության կարևորագույն մասը ներկայացնում է դատական իշխանության անկախությունը, ուստի, իրամայական է ամրապնդել այս իշխանությունը, որպես պետության և այլ հաստոկ շահագրգիռ խմբերի ազդեցությունից քաղաքացիական իրավունքների պաշտպանության երաշխիք:

Նշելով Խարտիայի կիրառելիության շրջանակը, 9-րդ հոդվածն ամրագրում է, որ Խարտիան կիրառելի է դատական գործառություներ իրականացնող բոլոր անձանց, այդ թվում ոչ պրոֆեսիոնալ դատավորների նկատմամբ: Խարտիան, հոչակելով դատավորի ներքին և արտաքին անկախությունն ապահովող սկզբունքները, առանձին հոդվածներով անդրադառնում է դատավորի երիկայի և կարգապահական պատասխանատվության հարցերին:

Այսպես, Խարտիայի 7-րդ հոդվածն ամրագրում է. «Դատական համակարգի դեկավարությ և դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործողությունները պետք է այնպես կազմակերպվեն, որ վտանգի տակ չդրվի դատավորի բոլոր անկախությունը, և, որ ուշադրության արժանանան միայն օրենսդիր և վերաբերելի հանգամանքները»:

Միջազգային կազմակերպությունները ևս տարածաշրջանային մակարդակով, մասնավորապես՝ Եվրոպայի խորհուրդը, վերջին տարիներին գործածության մեջ են դրել նոր չափանիշներ: Մասնավորապես, կարևորելով դատավորների դերը մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության գործմքացում, իրենց իրավական պարտականությունները կատարելիս Եվրոպայի խորհուրդը՝ Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության

մասին 2010/12 հանձնարարականի նախարանում շեշտել է, որ «դատական համակարգի անկախությունն ապահովում է յուրաքանչյուր մարդու արդար դատաքննության իրավունքը և հետևաբար, դատավորների համար արտոնություն չէ, այլ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի երաշխիք, որը բոլով է տախի յուրաքանչյուրին վստահություն ունենալ արդարադատության համակարգի հանդեպ»:.....

Խորացնելով նշված սահմանումը, Խարտիան իր 7.1.հոդվածում արձանագրում է. «Դատավորի նկատմամբ որևէ կարգապահական գործողություն չի կարող ծեռնարկվել՝ որպես նրա կողմից վարվող գործերով որոշումներ կայացնելիս օրենքի մեկնարանության կամ փաստերի գնահատման կամ ապացույցների կշռադատման հետևանքը, բացառությամբ դիտավորության կամ կոպիտ անփության դեպքերի, որոնք հաստափած են վերջնական դատական ակտով: Կարգապահական վարույթը պետք է իրականացվի օրենքով նախատեսված պատշաճ ընթացակարգով: Այդ վարույթը դատավորի համար պետք է հասանելի լինի, և նա պետք է հնարավորություն ունենա օգտվելու փաստաթանի կամ որևէ գործընկերու օգնությունից: Կարգապահական վարույթի արդյունքում կայացված որոշումները պետք է լինեն պատճառաբանված և կարող են բոլորքարկվել անկախ մարմնին: Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել միայն դրա վերաբերյալ օրենքի առկայության պայմաններում և այդ օրենքով նախատեսված կարգով: Կարգապահական տույժերը պետք է լինեն համաշափեցին»:

Խարտիան սահմանում է նաև, որ «պատճառաբանված և կարող են բոլորքարկվել անկախ մարմնին: Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել միայն դրա վերաբերյալ օրենքի առկայության պայմաններում և այդ օրենքով նախատեսված կարգով: Կարգապահական տույժերը պետք է լինեն համաշափեցին»:

Դատավորներին պատասխանատվության ենթարկելու միջազգային իրավակարգավորությունների ուսումնասիրությունները ևս վկայում են, որ հիմնականում պետություն



ներն ամրագրում են դատավորի պատասխանատվությունը բացառող մի շարք հանգամանքներ: Պետությունների մեծ մասի օրենսդրությունը սահմանում է, որ դատավորը չի կարող որևէ պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս իր հայտնած կամ իր կողմից կատարված իրավական մեջնարանության համար: Օրինակ, Հնդկաստանի Սահմանադրությունն ամրագրում է, որ Գերագույն դատարանի դատավորի լիազորությունների դադարեցման հիմք կարող է հանդիսանալ ոչ արժանապատիվ վարքագիծը, լիազորությունների կատարման անկարողությունը, իսկ Իռլանդիայի Սահմանադրությունը, որպես Գերագույն դատարանի և Բարձր դատարանի դատավորի լիազորությունների դադարեցման հիմք է դիտարկում հակարարույական վարքագիծը:

«Դատավորի կարգավիճակի մասին» Ուսուաստանի Դաշնության 2017թ. դեկտեմբերի 05-ի խմբագրությամբ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորը, այդ թվում լիազորությունները դադարեցրած դատավորը, չի կարող ենթարկվել որևէ տեսակի պատասխանատվության արդարադատություն իրականացնելիս իր արտօհայտած կարծիքի կամ կայացրած որոշման համար, եթե միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով չի ապացուցվել նրա մերժավորությունը դիտավորությամբ անարդարացի դատական ակտ կայացնելու մասին:

ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ, եթե առկա են հանցանործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ:

Հաշվի առնելով վերը բերված այլ պետությունների օրենսդրական կարգավորությունը և միջազգային փաստարդիքների կանոնակարգումները դատավորի կարգապահական պատասխանատվության մասին, նկատի ունենալով այն կարևոր փաստը, որ ժողովրդավարական հասարակության մեջ դատավորը չի կարող օժտված լինել բացարձակ ան-

ձևոնմխելիությամբ, դատավորին Սահմանադրությամբ վերապահելով վկայակոչված անկախության երաշխիքներով, Արցախի Հանրապետության դատական օրենսդրության ամրագրեց դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պայմանները և կարգը:

Քանի որ դատավորի անկախությունը երաշխիք է արդար դատաքննության, որն ակնկալում են բոլոր իրավաբանական և ֆիզիկական անձնին իրենց իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության ընթացքում, նաև այն, որ դատավորը պետք է իրական հնարավորություն ունենա իր դատական իշխանությունն իրականացնել ինչպես այլ դատավորներից և դատական դեկանակար մարմիններից, այնպես էլ տնտեսական, քաղաքական, սոցիալական ճնշումներից անկախ, հետևաբար, դատավորին պատասխանատվության ենթարկելն անհրաժեշտ է այնպես իրականացնել, որ դատավորի ազատությունն ու անկախությունն զերծ պահպես ցանկացած տեսակի ճնշումներից:

Այ դատական օրենսգրքում /այսուհետ՝ Օրենսդրությամբ սպառհի կերպով սահմանված են դատավորի պաշտոններան՝ դատարանում և դատարանից դուրս գործունեության և կյանքին առնչվող բոլոր պարտականությունները և պարտավորությունները:

Այսպես, Օրենսգրքի 118-րդ հոդվածը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորությամբ օժտելով միայն Բարձրագույն դատական խորհրդին, Խորհրդի առջև պարտականություն է դնում այդ գործառույթն իրականացնել օրինականության, դատական իշխանության անկախությունը հարգելու, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաշափության, կամայականության արգելքի և բափանցիկության սկզբունքների իմման վրա: Միաժամանակ, Օրենսգրքը սպառհի կերպով սահմանում է դատավորին կարգապահական պատասխանատվության հիմքերը /119հ./, դրանք խմբագրելով հետևյալ կերպ.

1) արդարադատություն իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմերը դիտավորությամբ կամ կոպահտ ան-



## ԼՂՀ դատական իշխանություն

փորձությամբ խախտելը.

2) դատավորի կողմից Օրենսգրքով սահմանված վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփորությամբ խախտելը.

3) դատավորի կողմից օրենքով նախատեսված պարտադիր վերապատրաստում անցնելու պարտականությունները չկատարելը:

Օրենսդիրը հատուկ նորմով՝ Օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, տվել է «դիտավորություն» և «անփորություն» տերմինների հասկացությունը. «Սույն հոդվածի իմաստով կարգապահական խախտումները համարվում են դիտավորությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր կողմից վարքագծի խախտում թույլ տալու հանգամանքը և ցանկացել կամ գիտակցաբար թույլ է տվել դա:»

3. Սույն հոդվածի իմաստով կարգապահական խախտումները համարվում են կոպիտ անփորությամբ կատարված, եթե դատավորը չի գիտակցել իր կողմից վարքագծի խախտում թույլ տալու հանգամանքը, սակայն տվյալ իրադրությունում պարտավոր էր և կարող էր գիտակցել այն»:

Պետք է նշել, որ ԱՀ նախորդ դատական օրենսգրքը ևս նախատեսում էր նյութական կամ դատավարական իրավունքի նորմերը դիտավորությամբ կամ կոպիտ անփորությամբ խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը, սակայն այն թերի էր մեկնաբանված: Նշված բերությունը նոր գործող Օրենսգրքով վերացվել է և սահմանվել, որ նշված հիմքով կարգապահական պատասխանատվության վարույթ կարող է հարուցվել, եթե նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտմամբ կայացված դատական ակտը բեկանվել (վերացվել) է և բեկանող (վերացնող) դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ: /119հ4մաս/

Միաժմանակ ցանկացած դատական ակտի բեկանումը կամ փոփոխումը հիմք չի կարող հանդիսանալ այդ ակտը կայացրած դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Դա կարող է տեղի ունենալ միայն այն ժամանակ, եթե

դա կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփորությամբ: Ոչ մի պարագայում դատավորը չի կարող ենթարկվել կարգապահական պատասխանատվության իրավական նորմին իր տված մեկնաբանության, դրա հիմնան վրա դատական ակտում արված եզրահանգումների, վերլուծության, դատողությունների, նյութական այս կամ այն նորմի կիրառման կամ չկիրառման համար: Այսպես, դա կդառնա դատավորի անկախության և միայն օրենքին ենթարկվելու միջազգային և սահմանադրական սկզբունքի խախտում: Ո՞ւսիմանադրական դատարանն իր 2011թ. հուլիսի 20-ի որոշման մեջ նշել է. «Կարգապահական խախտում կարող է համարվել այնպիսի դատական սխալը, որի հիմքում ընկած են դատավարության սկզբունքների և դատավարության մասնակիցների իրավունքների կողմից խախտում կարող է համարվել այնպիսի դատական սխալը, որի հիմքում ընկած են դատավարության սկզբունքների և դատավարության մասնակիցների իրավունքների կողմից կոպիտ խախտումները»: 3./  
Պոստանուածությունը կատարելու օրը՝ 20.07.2011 թ. հ. 19-Պ/..

Արցախի Հանրապետությունում դատավորի պատասխանատվության հիմքների ուսումնասիրությունը թույլ է տալիս դրանք դատակարգել երկու խմբում. 1/դատավորների կողմից արդարադատություն իրականացնելիս դիտավորությամբ կամ կոպիտ անփորությամբ դատական սխալ թույլ տալը, 2/ դատավորի վարքագծի կանոնների խախտում: Վերջին հերթ տարիների ընթացքում ԼՂՀ Արդարադատության խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու 14 որոշում է կայացվել, որից 13-ը դատական ակտում թույլ տրված դատավարական և նյութական նորմերի խախտման հիմքով, իսկ մեկը՝ դատավորի վարքագծի կանոնների՝ երիկայի նորմերի խախտման հիմքով:

ԱՀ դատական օրենսգրքի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ Բարձրագույն դատական խորհրդին վերապահված են բոլոր այն իրավական ներգործության միջոցներն ու գործիքները, որոնք անհրաժեշտ են օրենքի նորմերի ակնհայտ կամ կոպիտ խախտումները հաստատելու և համարժեք իրավաբանական գնահատական արժանացնելու համար: Այսպես, Օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատա-



վորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս Բարձրագույն դատական խորհուրդը գործում է որպես դատարան:

Նոյն հոդվածի կարգավորումից հետևում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործով Բարձրագույն դատական խորհուրդի միասները դրնբաց են՝ բացառությամբ այն դեպքերի, եթե դրանք Բարձրագույն դատական խորհրդի որոշմամբ անցկացվում են դրնվակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով, օրենքով պահպանվող այլ տեղեկությունների պահպանության համար:

Բարձրագույն դատական խորհրդի անդամը կարող է ինքնարացարկ հայտնել:

Կարգապահական վարույթ հարուցած մարմինը, դատավորը և Բարձրագույն դատական խորհրդի անդամները կարող են Բարձրագույն դատական խորհրդի անդամին բացարկ հայտնելու միջնորդություն ներկայացնել Բարձրագույն դատական խորհրդի նախագահին կամ նիստը նախագահողին:

Բարձրագույն դատական խորհուրդը, քննարկելով խորհրդի անդամի ինքնարացարկի կամ բացարկի հարցը, սույն օրենսգրքով սահմանված ինքնարացարկի հիմքերի առկայության դեպքում որոշում է կայացնում Բարձրագույն դատական խորհրդի անդամի ինքնարացարկի կամ բացարկի միջնորդությունը բավարարելու մասին: Միջնորդությունը բավարարվելու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի այդ անդամը չի կարող մասնակցել տվյալ գործով նիստին և քվեարկել:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի առկայության ապացուցման պարտականությունը կրում է կարգապահական վարույթը հարուցած մարմինը: Բարձրագույն դատական խորհրդի միասնում դատավորի կողմից կատարված կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնարանվում են դատավորի օգտին:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը Բարձրագույն դատական խորհրդությունը կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունը ստանալու պահից մենամասվածմանը մասնաւում: Օրենսգրքը նախատեսում է նաև Բարձրագույն դատական խորհրդության դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացքը: Մասնավորապես, 127-րդ հոդվածը սահմանում է, որ Բարձրագույն դատական խորհրդություն հարցի քննությունը սկսվում է հարցի էության և կարգապահական խախտման մասին եզրակացության վերաբերյալ վարույթ հարուցած անձի գեկուցմամբ: Եթե դատավորի նկատմամբ կարգապահական վարույթը հարցել է արդարադատության նախարարը, ապա վերջինս պարտավոր է ներկա գտնվել Բարձրագույն դատական խորհրդի նիստին և իրավունք ունի հանդես գալու անձամբ կամ ներկայացուցչի միջոցով: Եթե կարգապահական վարույթը հարուցվել է Երիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից, ապա Բարձրագույն դատական խորհրդի նիստին կարգապահական խախտման մասին եզրակացության վերաբերյալ Երիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի հանձնարարությամբ գեկուցում է դրա անդամներից մեկը:

Այն դեպքում, եթե կարգապահական վարույթի նյութերը Բարձրագույն դատական խորհրդին ուղարկելուց հետո կարգապահական վարույթ հարուցած մարմնին հայտնի են դարձել հանգամանքներ, որոնք մեղմացնում են դատավորի վիճակը կամ բացառում նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելը, վարույթ հարուցած մարմնինը պարտավոր է դրա մասին հայտնել Բարձրագույն դատական խորհրդին:

Բարձրագույն դատական խորհրդությունը հարուցած մարմնի գեկուցումից հետո խորհուրդը լսում է այն դատավորի բացառությունները, որի նկատմամբ վարույթ է հարուցվել: Դատավորը Բարձրագույն դատական խորհրդությունը բացատրություն է տալիս կարգապահական խախտման մասին եզրակացության մեջ արտացոլված յուրաքանչյուր



## ԼՂՀ դատական իշխանություն

խախտման վերաբերյալ: Նա կարող է ժխտել իր կողմից կարգապահական խախտում համարվող արարքի կատարման փաստը, վիճարկել արարքի որակումը՝ որպես կարգապահական խախտում, կամ վերոհիշյալ երկուոր միաժամանակ: Եթե դատավորը չի վիճարկում կարգապահական խախտման փաստի առկայությունը և համաձայնում է տվյալ արարքի որակմանը՝ որպես կարգապահական խախտում, ապա Բարձրագույն դատական խորհուրդն անմիջապես անցնում է դատավորի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու հարցի քննարկմանը:

Եթե դատավորը վիճարկում է իր կողմից կարգապահական խախտում կատարելու փաստը, ապա նրա բացատրությունները լսելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդն անցնում է վարույթի նյութերի և ապացույցների հետագործմանը:

Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի նաև իր նախաձեռնությամբ նիստին հրավիրելու ո հարցաքննելու վկաների: Վկաների շներկայանալու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի վկային բերման ենթարկելու մասին որոշում կայացնել:

Բարձրագույն դատական խորհուրդը գործով հրավիրված վկաներին նախազգուշացնում է վկայություն տալու հրաժարվելու կամ խուսափելու, ակնհայտ սուտ վկայություն տալու, իսկ փորձագետին՝ եզրակացություն տալուց հրաժարվելու կամ խուսափելու, ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար սահմանված պատասխանատվության մասին:

Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի նաև իր նախաձեռնությամբ ապացույցներ պահանջելու:

Գործի նյութերի ուսումնասիրությունից հետո Բարձրագույն դատական խորհուրդը լսում է նիստին մասնակցող անձանց եզրափակիչ ելույթները, որից հետո նիստը հայտարարվում է ավարտված:

9. Բարձրագույն դատական խորհուրդը քվեարկության է դնում կարգապահական խախտման առկայության և կարգապահական տույժի տեսակի ընտրության հարցերը:

Օրենսգրքով սահմանվում են նաև դատա-

վորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության սահմանները, որից հետևում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործի քննությունը Բարձրագույն դատական խորհրդում կատարվում է միայն դատավորի նկատմամբ և միայն այն կարգապահական խախտման սահմաններում, որով կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհրդին:

Օրենսգրքը նախատեսում է նաև հարցի քննության ընթացքում դատավորի իրավունքներն ու պարտականությունները: Այսպես, Օրենսգրքի 129-րդ հոդվածի համաձայն՝ Դատավորն իրավունք ունի՝

1) ծանոթանալու Բարձրագույն դատական խորհրդում հարցի քննության համար իմբը հանդիսացող նյութերին, քաղվածքներ անելու, ստանալու դրանց պատճենները.

2) հարցեր տալու ելույթ ունեցողին, առարկություններ ներկայացնելու, բացատրություններ տալու և միջնորդություններ անելու.

3) ապացույցներ ներկայացնելու և մասնակցելու դրանց հետագործմանը.

4) մասնակցելու նիստին՝ հանդես գալով անձանք, ինչպես նաև փաստաբանի միջոցով:

2. Դատավորի փաստաբանը բոլոր դեպքերում իրավունք ունի մասնակցելու Բարձրագույն դատականի խորհրդում տվյալ դատավորի վերաբերյալ հարցի քննարկմանը և օգտվում է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավունքներից:

3. Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը քննելիս դատավորն օգտվում է Սահմանադրության 61-րդ հոդվածով և Մարդու իրավունքների և իմանարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված երաշխիքներից:

4. Բարձրագույն դատական խորհրդի կանչին դատավորի անհարգելի չներկայանալու դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը դատավորին կարգապահական



պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցն իրավունք ունի քննելու դատավորի բացակայությամբ:

Օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն՝ 1. Մեկ կարգապահական վարույթի քննության շրջանակներում, անզամ եթե նույն դատավորը կատարել է մի քանի կարգապահական խախտում, Բարձրագույն դատական խորհուրդը կայացնում է մեկ որոշում։

2. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու Բարձրագույն դատական խորհրդի նիստն իրավագործ է խորհրդի չորս անդամների ներկայության դեպքում։

3. Որոշումն ընդունվում է միայն Բարձրագույն դատական խորհրդի անդամների ներկայությամբ։ Որոշումն ընդունվում է Բարձրագույն դատական խորհրդի բոլոր անդամների ձայների մեծամասնությամբ՝ փակ քվեարկությամբ։

4. Բարձրագույն դատական խորհրդի կողմից որոշում ընդունելու համար քննարկված հարցերը, խորհրդի անդամների կողմից արտահայտված դիրքորոշումները և քվեարկության արդյունքները հրապարակման ենթակա չեն ինչպես նիստի ընթացքում, այնպես էլ գործու քննությունն ավարտվելուց հետո՝ բացառությամբ խորհրդի անդամն կողմից ներկայացված հատուկ կարծիքի։

5. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի քննության արդյունքում՝ Բարձրագույն դատական խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը։

1) դատավորին սույն օրենսգրքով նախատեսված կարգապահական տույժի ենթարկելու մասին։

2) գործի վարույթը կարծելու մասին։

**ԲԳԽ քննարկվող որոշումներին օրենսդիրն առաջադրում է որոշակի պահանջներ, որոնք ունեն քննիանությունները քրեական, վարչական, քաղաքացիական գործերով դատարանների կողմից կայացվող դատական ակտերին առաջադրվող օրենսդրական պահանջներին։**

Վկայակոչված կարգավորումները հիմք են տալիս փաստելու, որ դատավորին կարգապահական պատասխանատվության են-

թարկելիս ԲԳԽ հանդես է գալիս որպես դատարան, ինչն էլ նշանակում է, որ կարգապահական վարույթը դատավորի կողմից արդարադատության իրականացման ընթացքում քույլ տված խախտման հետևանքով դատավորի նկատմամբ կիրավող իրավական ներգործության միջոց է, որը առաջացնում է օրենքով կանխորոշված իրավական հետևանքներ։

1. **ԼՂՀ Սահմանադրություն-2006թ. ք.Ստուխանակերպ**

2. **ԱՀ Սահմանադրություն-2017թ. ք.Ստուխանակերպ**

3. **ԼՂՀ դադարական օրենսգրք-2009թ. ք.Ստուխանակերպ**

4. **ԱՀ դադարական օրենսգրք-2017թ. ք.Ստուխանակերպ**

5. **ԼՂՀ դադարական օրենսգրքի նախագիծ**

6. «**ԼՂՀ օրենքը դադարականականության մասին»/31.12.1999թ. ք.Ստուխանակերպ ՀՕ-80**

7. «**ԼՂՀ օրենքը դադարական մագիստրադուրական մասին»/31.12.1999թ. ք.Ստուխանակերպ ՀՕ-81**

8. «**ԼՂՀ օրենքը դադարական կարգավիճակի մասին»/29.12.2017թ. ք.Ստուխանակերպ ՀՕ-79/**

9. «**ԼՂՀ օրենքը դադարականականության մասին»/16.04.2008թ./**

10. **ԼՂՀ դադարական վարչագծի կանոնագիրը /10.07.2002թ. հասպարզած է ԼՂՀ դադարական մագիստրադուրական խորհրդի կողմից/**

11. <https://wcd.coe.int./ViewDoc.jsp?p=&id=1053125&Site=COE&direct=true>:

Եվրոպական դադարակունիքի խորհրդադրական կառավորության 2010 թվականի առջևմբերի 17-ին ընդունված «Դադարական ազգային ուժությունուների մեջ խարդիա (Հմմարար սկզբունքներ)», Եվրոպական դադարակունիքի խորհրդադրական խորհրդի կողմից 2002 թվականի առջևմբերի 19-ին ընդունված «Դադարակունիքի մասնագիրական վարչագծի կարգավորող սկզբունքների և կանոնական մասին»թիվ 3 կարծիք, Իրավունքի միջոցով հանուն ժողովադատության եվրոպական հանձնաժողովի կողմից 2010 թվականի մարտի 16-ին ընդունված «Դադարական իշխանության անկախության մասին (Մաս 1. Դադարակունիքի անկախության սկզբունքը)» գեկույց։